Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Կ. Մարդանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց

Թեմա՝ Կրտսեր դպրոցականների հուզական ոլորտի առանձնահատկությունները

Վերապատրաստող, մենթոր՝ Էմմա Քոսակյան

Կատարող՝ Մարգարիտ Աթոյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1. Գրականության վերլուծություն 5

1.1. Կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունները 5

1.2. Կրտսեր դպրոցականների հուզական ոլորտի առանձնահատկությունները..... 8

1.3. Մուլտֆիլմերի ազդեցությունը կրտսեր դպրոցական դպրոցականների հուզական ոլորտի զարգացման գործում 14

Գլուխ 2. Հետազոտական մաս 17

2.1. Հետազոտության կազմակրեպումը, մեթոդիկաների համառոտ բնութագիրը 17

Եզրակացություն..... 20

Օգտագործված գրականության ցանկ 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրտսեր դպրոցական տարիքը ամենակարևոր շրջանն է անձի կայացման և զարգացման համար, այն կախված է երեխային շրջապատող ֆիզիկական և սոցիալական միջավայրից, դրանք են ընտանիք, դպրոց, ընկերներ: Կրտսեր դպրոցում պետք է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ կզարգանան սովորողների դեռևս նոր ձեռք բերած անձնային հատկանիշներ՝ ինքնուրույնություն ինչ-որ նոր բան սովորելու հակում, հետաքրքրասիրություն: Որն էլ պիտի հիմք հանդիսանա երեխայի «ես»-ի հետագա ամրացմանն ու կայունացմանը:

Աշխատանքը խիստ արդիական է, քանի որ, կրտսեր դպրոցական տարիքը համարվում է անձի կայացման կարևորագույն փուլերից մեկը, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի մի շրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել, տարբեր պահանջներ իրականացնել: Կրտսեր դպրոցական տարիքը հանդես է գալիս որպես երեխայի հոգեկան գործընթացների զարգացման սենզիտիվ շրջան: Այս տարիքում երեխայի մոտ առավելապես զարգանում են շփումը և հաղորդակցումը:

Աշխատանքի **նպատակն է՝** ուսումնասիրել կրտսեր դպրոցականների հուզական ոլորտի առանձնահատկությունները, կարողությունները դրանց զարգացման առանձնահատկությունները:

Աշխատանքի նպատակից բխում են հետևյալ **խնդիրները՝**

- ՈՒսումնասիրել կրտսեր դպրոցականների հուզական կարողությունները, դրանց զարգացման առանձնահատկությունների վերաբերյալ առկա տեսական նյութերը:
- ՈՒսումնասիրել կրտսեր դպրոցականների հուզական առանձնահատկությունների դրսևորումները և հայտանբերել այն աշակերտներին, ովքեր ունեն հուզական ոլորտի հետ կապված խնդիրներ:
- Աշխատել այդ աշակերտների հետ, արդյունքները վեր հանել և վերլուծել:

- Բացահայտել հաղորդակցման առանձնահատկությունները կրտսեր դպրոցական տարիքում:
- Բացահայտել մուլտֆիլմերի ազդեցությունը կրտսեր դպրոցականների հուզական ոլորտի համար:

Հետազոտության վարկածը. Մենք կարծում ենք, որ կրտսեր դպրոցականների հուզական ոլորտի վրա համակարգչային խաղերը, ագրեսիա տարածող, ոչ ուսուցողական մուլտֆիլմերը ունենում են բացասական ազդեցություն:

Հետազոտության ընտրանքը՝ տարրական դասարանի աշակերտներ:

Հետազոտության մեթոդները՝ դիտարկում, զրույց, հարցում:

Գլուխ 1. Գրականության վերլուծություն

1.1. Կրտսեր դպրոցականների տարիքային առանձնահատկությունները

Կրտսեր դպրոցական տարիքը 6-ից 9-10 տարեկան անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի մի շրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել տարբեր պահանջներ իրականացնել: Այս շրջանում հակասության մեջ են մտնում երկու հիմնական դրդապատճառ՝ անհրաժեշտության և ցանկության:Մի կողմից, առաջնորդվելով անհրաժեշտության պահանջմունքով, երեխան բացահայտում է հասուն կյանքը, իսկ մյուս կողմից դրդված լինելով ցանկության պահանջմունքով, երեխան ցուցաբերում է այնպիսի վարք, որը վերադարձնում է իրեն մանկության աշխարհ, որտեղ ամենը ապահով է, ծանոթ, իրականանալի, չկան որոշակի պարտականություններ և պահանջներ:

Կրտսեր դպրոցական տարիքը բնորոշվում է երեխայի կյանքում կարևոր փոփոխություններով՝ դպրոց ընդունվելով: Ընդունվելով դպրոց՝ երեխան նոր դիրք է զբաղեցնում հասարակության մեջ, նրան առաջդրվում են պարտականություններ , կապված, ուսումնական գործունեության հետ: Կրտսեր դպրոցական տարիքում առկա էսոցիալական հարաբերությունների երկու ձև՝ երեխա-մեծահասակ և երեխա-երեխաներ: Երեխա-մեծահասակ համակարգը տարբերակվում է. երեխա-ուսուցիչ, երեխա-մեծահասակ, երեխա-ծնողներ և երեխա-երեխաներ:

Ուսումնական գործունեությունը պահանջում է երեխայից խոսքի, ուշադրության, հիշողության, երևակայության և մտածողության զարգացման նոր ձեռքբերումներ, ստեղծում է նոր պայմաններ երեխայի անձնավորության զարգացման համար:

Խոսքային և հուզական շփում: Դպրոցը երեխայի առջև դնում է խոսքի զարգացման նոր պահանջներ՝ դասի ժամին պատասխանը լինի հակիրճ, հստակ իմաստով, արտահայտիչ, հաղորդակցման ժամանակ խոսքի կառուցվածքը պետք է համապատասխանի մշակույթում ձևավորված նորմերին: Հաղորդակցումը դառնում է սոցիալական հարաբերությունների յուրահատուկ դպրոց: Երեխան դեռ դեռ անգիտակցորեն բացահայտում է իր համար հաղորդակցման տարբեր ոճերի գոյությունը: Հաճախ երեխան բախվում է ֆրուստրացիոն հաղորդակցման քայքայման խնդրի հետ.

1. Ֆրուստրացիայի հաղթահարման միտված վարք-սոցիալական նորմերի նկատմամբ ադապտիվ դրական վերաբերմունք:
2. Ֆրուստրացիայի վրա կենտրոնացված, ոչ ադեկվատ վարք-սոցիալական նորմերի նկատմամբ ադապտիվ վերաբերմունք:
3. Ֆրուստրացիայի վրա կենտրոնացված, ագրեսիվ վարք-սոցիալական նորմերի նկատմամաբ բացասական վերաբերմունք:
4. Ֆրուստրացիայի վրա կենտրոնացված, նորմերը անտեսող վարք-սոցիալական կոմնորոշման բացասական դրսևորում :
5. .Պասիվ վարքագիծ-սոցիալական կոմնորոշման ոչ ադապտիվ, թերզարգացած դրսևորում:

Միայն սեփական գործունեության արդյունքում է երեխան իր համար բացահայտում հաղորդակցման ձևերի հնարավոր բոլոր տարբերակները: Այս տարիքի երեխայի զարգացման հիմնական բնութագրերից է այն, որ թեև կտրուկ փոխվում է գործունեության ձևը, դեռևս պահպանվում է խաղալու պահանջմունքը: Այդ իսկ պատճառով դպրոցական կյանքի սկզբնական շրջանում չափազանց կարևոր է ուսումնական գործընթացում խաղային էլեմենտի առկայությունը, ինչը մեծացնում է երեխայի հետաքրքրությունը ուսման հանդեպ: Մեծ է նաև շարժվելու պահանջմունքը, հետևաբար, ուսուցիչը ուսումնական գործընթացը կազմակերպելիս պետք է կիրառի շարժողական խաղեր,որոնք նպաստում են երեխայի ուշադրության

զարգացմանը, կենտրոնանալու կարողությանը: Կրտսեր դպրոցականի համար նաև չափազանց կարևոր է նոր տպավորություններ ստանալու ձեռք բերելու պահանջը, որի հիման վրա ձևավորում են գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելու պահանջը: Այս պահանջը առաջնորդում է երեխայի զարգանալու, դրդապատճառների նոր համակարգ ձևավորելու ընթացքը: Աշակերտի համար կարևորվում են ուսուցչի գովասանքը, գնահատականը, ավելի ուշ հասակակիցների կարծիքը իր անձի վերաբերյալ: Այս ամենը նպաստում է երեխայի կողմից սոցիալական իր նոր դերերի գիտակցմանը, իր ՛՛Ես՛՛-ի ինքնահաստատմանը:

Կրտսեր դպրոցի առաջին տարիներին ուսուցիչը երեխայի համար միակ և անկոտրուն հեղինակությունն է:Աշակերտի շփումը հիմնականում ուղղված է նրան, համադասարանցիներին, ում գնահատում է նա: Այդ պատճառով, ուսուցիչը որպես հեղինակություն կարող է ուղղորդել երեխայի հասարակական շփումները:

Ուսումնական գործունեության ընթացքում ձևավորվում են նաև մնացած հոգեկան ոլորտները՝ ուշադրությունը, ընկալումը, հիշողությունը: Առաջին օրվանից սկսած ուսումնական գործունեության ընթացքում դրվում են չափազանց մեծ պահանջներ ուշադրության վրա: Երեխան ուսուցչի հրահանգով պետք է ուշադրությունը կենտրոնացնի և պահպանի այնպիսի առարկաների վրա, որոնք գրավիչ են վերջինիս համար: Հիշողությունը դառնում է գիտակցված, եթե հիմնվում է նյութի տրամաբանական մշակման միջոցների վրա: Կարևոր է երեխային հասկացնել մտապահված նյութի հետ ակտիվ աշխատանքի կարևորությունը:

1.2. Կրտսեր դպրոցականների հուզական ոլորտի առանձնահատկությունները

Հուզականության տակ հասկացվում է էմոցիոնալ ապրումների ամբողջ համակարգը, ներառյալ տրամադրությունը, հույզերը, զգացմունքները, աֆֆեկտները, կիրքը: Փիլիսոփայությունում և հոգեբանությունում մարդու այդ սուբյեկտիվ կողմը բացատրվում է որպես կարևորներից մեկը, իսկ մոտեցումների շարքում ուղիղ հարաբերվում է մարդու անձնավորության միջուկը:

Հույզերը դրանք այն է, ինչ ապրվում է որպես զգացմունք, որը մոտիվացնում կազմակերպում և ուղղորդում է ընկալումը, մտածողություն և գործունեությունը: Հույզերը մոտիվացնում են, նրանք մոբիլիզացնում են էներգիան, և այդ էներգիան որոշ դեպքերում սուբյեկտի կողմից ընկալվում է որպես գործողության իրականացման միտում: Հույզերը վերահսկում են մարդու ֆիզիկական ակտիվությունը և մտածողությունը՝ ուղղորդելով այն որոշակի ուղղությամբ:

Հույզերը կարգավորում են, կամ ավելի ճիշտ ասած, զտում են մեր ընկալումը: Երջանկությունը մարդուն ստիպում է ընկալել աշխարհը վարդագույն ակնոցներով՝ զմայլվել սովորական կենսական երևույթներով, օրնակ դաշտային ծաղիկի բույրով, արևմուտքի տեսարանով և այլն:

Հիմնական հույզեր: Կատեգորիաներ, որոնք բնորոշում են որպես հիմնական՝

1. Հիմնական հույզերը ունեն առանձնահատուկ նյարդային սուբտրատներ:
2. Հիմնական հույզերը իրենց դրսևորում են դեմքի մկանների արտահայտիչ և յուրօրինակ կարգավորման միջոցով:
3. Հիմնական հույզերին հետևում են հստակ և յուրօրինակ ապրում, որը գիտակցվում է մարդու կողմից:

4. Հիմնական հույզերը առաջացել են էվոլյուցիոն- կենսաբանական պրոցեսների արդյունքում:
5. Հիմնական հույզերը ունեն մոտիվացիոն և կազմակերպչական ազդեցություն մարդու վրա, նպաստում են ադապտացիային:

Կրտսեր դպրոցականների մոտ հիմնական են կամարվում հետքաքրքրության, ուրախության, զարմանքի, տխրության, զայրույթի, զզվանքի և վախի հույզերը: Ինտերպրիտացնելով որպես միմիկական դրսևորում աչքերի և գլխի շարժումները՝ այս ցուցակին կարելի է ավելացնել ամոթի զգացման հույզը:Ինչը վերաբերում է մեղքի զգացումին, ապա նրան հաճախ դասում են հիմնական հույզերի շարքին, չնայած որ նա չունի միմիկական կամ պանտոմիմիկական հստակ արտահայտում:

Դպրոց հաճախելուց հետո փոխվում է երեխայի հուզական ոլորտը, ինչը պայմանավորված է գործունեության բովանդակության ընդլայման հետ և հույզեր առաջացնող օբյեկտների թվի ավելացմամբ: Այն գրգռիչները, որոնք հուզական ազդակ են առաջացնում նախադպրոցական տարիքի երեխաների մոտ, կրտսեր դպրոցականների մոտ կարող են չառաջացնել: Չնայած որ կրտսեր դպրոցական բուռն արձագանքում է այն իրադարձություններին, որոնք ազդում են նրանց վրա, նրա մոտ առաջացնում է անցանկալի հուզական ռեակցիաների կամային ջանքերի ճնշման ունակություն: Ինչի արդյունքում դիտվում է ապրման տարամիտում ինչպես մի, այնպես էլ մյուս ուղղությամբ: Նա կարող է չարտահայտել առաջած հույզը, ինպչպես նաև արտահայտել հույզը, որը իրականում չի ապրվել:

Կրտսեր դպրոցկանի հուզական ֆոնի նկարագրություն՝

1. արագ ռեակցիա իրադարձություններին և հստակ ընկալում,
2. անմիջականություն, սեփական ապրումների բաց արտահայտում՝ ուրախության, թախիծի, վախի, բավարվածության կամ անբավարարվածության,

3. աֆֆեկտային վախի սպասում՝ ուսումնական պրոցեսի ընթացքում երեխան ունենում է վախ,որպես անհաջողության կանխազ•ացում, սեփական ուժերի նկատմամբ անվստահություն, խնդիրների լուծման անկարողություն,
4. երեխան զգում է սպառնալիք՝ դասարանում և ընտանիքում իր ստատուսի նկատմամբ,
5. էական հուզական անկայունություն, ռրամադրության փոփոխություն, կարճաժամկետ և բուռն աֆֆեկտների նկատմամբ տրամադրվածություն,
6. էմոցիածին գործոններ կրտսեր դպրոցականների համար համադրվում են ոչ միայն խաղերը և տարեկիցների հետ շփումը, այլ նաև հաջողությունները ուսուցման մեջ և այդ հաջողությունների գնահատականները ուսուցչի և համադասարանցիների կողմից,
7. սեփական և ուրիշների հույզերն ու զգացմունքները դժվար են գիտակցվում,
8. այլ մարդկանց միմիկան և զ•ացմունքների արտահայտումը հաճախ սխալ է ընկալվում, ինչը կանխորոշում է կրտսեր դպրոցականի ոչ ադեկվատ ռեակցիան:

Բացառություն են կազմում վախի և ուրախության հիմնական հույզերը: Կրտսեր դպրոցականները ավելի լավ են հասկանում հույզերը, որոնք առաջանում են իենց ծանոթ իրավիճակներում, բայց ոչ միշտ են կարողանում հուզական ապրումները արտահայտել բառերով: Ավելի հեշտ հասկանում են դրական հույզերը, քան բացասական: Նրանք դժվար են տարբերում վախի և զարմանքի հույզերը: Չեն ճանաչում մեղքի զգացումի հույզերը:

Կրտսեր դպրոցականի մոտ առաջանում են ապրումակցելու ունակություն դրամատիկական կոնֆիլկտների ընկալման ժամանակ:

Մինչև երրորդ դասարանը դպրոցականները հիացմունքով են նայում հերոսներին, մարզիկներին: Այս տարիքում սկսվում է սեր հայրենիքի նկատմամբ, կապվածություն հասակակիցների և ընկերների նկատմամբ: Երկրորդ աստիճանում այսինքն 7-9 տարեկանում՝ երեխաները սկսում են գիտակցել ուրիշներին հասկանալու զգացումը: Ընկերական հարաբերությունների ձևավորման համար կարևոր է ուրիշի գործողությունների սուբյեկտիվ գնահատումը:

Երրորդ աստիճանում այսինքն 9-11 տարեկանում ընկերությունը հիմնված է փոխօգնության վրա: Ընկերական կապը շատ ուժեղ է, սակայն նրանք հիմնականում կարճաժամկետ են

Չորրորդ աստիճանում այսինքն 11-12 տարեկանում ընկերությունը հասկացվում է որպես երկարաժամկետ, կայուն փոխհարաբերություն, որոնք հիմնված են փոխադարձ վստահության վրա:

Հաճախ մանկական ընկերությունը ընդհատվում է, երբ ընկերները տեղափոխվում են այլ դպրոց կամ կամ տեղափոխվում են այլ քաղաք: Այս դեպքում երկուսն էլ ունենում են կորստի զգացում, թախիծի զգացում, մինչև որ կգտնեն նոր ընկերներ:

Վարքի նոր կանոնների նորմերի յուրացումը էական փոփոխությունների է ենթադրում կրտսեր դպրոցականների հուզական կյանքը: Շատերի մոտ այդ փոփոխությունները, որպես կանոն, տեղի են ունենում առանց բացասական ապրումների և հենց իրենց՝ երեխաների կողմից էլ ընկալվում են որպես դրական երևույթ: Օրինակ նրանք ուրախանում են համադասարանցիների հետ հաստատվող բարեկամական նոր կապերի համար, պատասխանատու վերաբերմունք են դրսևորում դպրոցում իրենց վարքին ներկայացվող պահանջների նկատմամբ:

Ուսումնական գործունեության ընթացքում, հոգեկան այլ պրոցեսների նման, փոխվում է նաև երեխաների հույզերի բնույթը: Այդ գործունեությունը կապված է համատեղ գործողություններին ներկայացվող խիստ

պահանջնեի համակարգի, գիտակցված կարգապահության, կամածին ուշադրության և հիշողության հետ:

Այս ամենը ազդում է երեխաների հույզերի վրա: Կրտսեր դպրոցական հասակի ողջ ընթացքում կարելի է նկատել հույզերի դրսևորման գործում զսպվածություն և գիտակցվածության ուժեղացում հուզական վիճակների կայունության աճ: Կրտսեր դպրոցականները արդեն կարողանում են կառավարել իրենց տրամադրություն, իսկ երբեմն նույնիսկ քողարկել դրանք: Կրտսեր դպրոցականները ավելի հավասարակշռված են, քան նախադպրոցականներն ու դեռահասաները: Նրանց հատուկ են տևական, կայուն, ուրախ և աշխույժ տրամադրությունը: Սակայն որոշ երեխաների մոտ նկատվում են բացասական աֆեկտիվ վիճակներ: Դրանց գլխավոր պատճառը հավակնությունների մակարդակի դրանց բավարարման հնարավորությունների միջև անհամապատասխանությունն է:

Իրենց ուսումնական գործունեության գնահատականը նրանք համարում են ամբողջ անձի գնահատական: Բացասական գնահատականները, դիտողությունները նրանց մոտ առաջացնում են տագնապայնություն, անհարմարության վիճակ, ինչի հետևանքով աշակերտներից շատերը դառնում են պասիվ:

Երեխայի հուզական վիճակից կախված վարքի անկայունությունը դժվարացնում է ինչպես մանկավարժի հետ հարաբերությունները, այնպես էլ դասի ժամանակ երեխաների կոլեկտիվ աշխատանքը: Վեց տարեկան երեխաների զարգացման տարբեր կողմերի հետազոտությունները ցույց են տվել, որ նրանք իրենց հանգիստ, հարմարավետ, ինքնավստահ են զգում մանկապարտեզի նախապատրաստական խմբերում ուսուցման ժամանակ՝ ի տարբերություն դպրոցի առաջին դասարանի: Գլխավոր պատճառն այն է, որ համապատասխանում է երեխայի հոգեկան զարգացման մակարդակին:

Ինչպես ցույց են տվել դպրոցում իրականացված կոմպլեքս հետազոտությունները անբարենպաստ պայմաններում հաճախ վատանում

է երեխաների առողջական վիճակը, կարող է քաշ պակասել, նվազել, հեմոգլոբինի քանակն արյան մեջ, իջնում է տեսողության սրությունը, ի հայտ են գալիս գլխացավեր: Ընդհանուր ինքնազգացողության վատացման պատճառով՝ նվազում է երեխայի ոչ այդքան բարձր աշխատունակությունը, ինչը բացասաբար է ազդում ուսման վրա: Առանձին դեպքերում առաջանում են նևրոզներ, դպրոցական դեզադապտացիա, նրանք լարված են և ֆիզիկապես և հոգեպես: Հարաբերականորեն բարենպաստ պայմաններում հոգեբանական լարվածությունն աստիճանաբար նվազում է 1,5-2 ամսից: Առավել խիստ պայմաններում այն պահպանվում է՝ առաջացնելով երկրորդային էֆեկտներ ինչպես հոգեբանական, այնպես էլ սոմատիկ առումներով:

Այսպիսով՝ դպրոց ընդունվելով փոխվում է կրտսեր դպրոցականների հուզական ոլորտի ուղղվածությունը,, կապված գործունեության փոփոխության և հուզական օբյեկտների շրջանակի ընդլայման հետ: Այն հուզական ռեակցիաները, որոնք ռեակցիա էին առաջացնում նախադպրոցականների մոտ, կրտսեր դպրոցականների մոտ արդեն չեն գործում: Այս տարիքային շրջանի կարևոր առանձնահատկությունը համարվում է անսահման վստահությունը մեծահասակի նկատմամբ, նրան ենթարկվելը և կրկնօրինակելը: Հաջորդ առանձնահատկությունը երեխաների կողմից հաջողության ձգտման դիրքորոշումն է և վարքի կամային կառավարումը: Ինքնագնահատականը և խրախուսման ձգտումը մեծ դեր խաղում կրտսեր դպրոցականի կյանքում:Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն մոտ առկա է եղել ակտիվ կամ չափավոր բարձր ինքնագնահատակն: Հետևաբար, տարիքը, որը համապատասխանում է դպրացական ուսուցման 1-4 դասարաններին, կարելի ՝ դիտարկել որպես երեխայի անձի բնութագրի առաջացման և ամրապնդման կարևորագույն շրջան, որը դառնալով բավականաչափ կայուն, որոշում է նրա հուզական վիճակը գործունեության տարբեր տեսակների ընթացքում:

1.3. Մուլտֆիլմերի ազդեցությունը կրտսեր դպրոցական դպրոցականների հուզական ոլորտի զարգացման գործում

Մուլտֆիլմը,որն անվանում են նաև անիմացիա առաջացել է լատիներեն **anima** բառից, որը նշանակում է հոգի, հետևաբար անիմացիա նշանակում է ոգեշնչում, աշխուժացում: Սրան զուգահեռ անիմացիան ազդում է երեխայի ֆիզիկական և հոգեկան առողջության, հուզական ճանաչողական ոլորտների, բնավորության և վարքի ձևավորման վրա: Միանշանակ ոչ բոլոր մոիլտֆիլմերն են օ•տակար,և ոչ բոլորն են նախատեսված երեխաների համար: Գոյություն ունեցող բոլոր մուլտֆիլմերը կարելի է պայմանականորեն դասակարգել օգտակար և վնասակար տեսակների: Օգտակար մուլտֆիլմը կատարում է դաստիարակող և ուսուցանող ֆունկցիա: Դրա միջոցով զարգանում են երեխաների հետաքրքրությունները, ձևավարվում բարոյական նորմերը, վարքի կանոնները, զարգանում է կամքը: Երեխան սովորում է ապրումակցել և կարեկցել:

Մուլտֆիլմի հերոսներին սովորեցնում են չհանձնվել, պայքարել, հասնել նպատակին, իրականություն դարձնել երազանքները: Մուլտֆիլմը նաև նպաստում է երեխայի սոցիալականացմանը, օգնում հասակակիցների և մեծահասակների հետ հարաբերությունների հաստատմանը: Վնասակար մուլտֆիլմերը պարունակում են ագրեսիա, դաժանություն, բռնություն, չարիք: Դրանք բացասական ազդեցություն են գործում երեխայի հոգեկանի վրա՝ վերջիններիս դարձնելով սառնասիրտ, անտարբեր թե մարդկանց, թե կենդանիների նկատմամբ, անգութ, եսասեր, կամակոր, հաշվենկատ: Վախ և սարսափ առաջացնող մուկտֆիլմերը բացասաբար են անդրադառնում նաև երեխաների ֆիզիկական թուլացման, գլխացավերի և մի շարք այլ հոգեսոմատիկ հիվանդությունների:

Սոցիալական և հասարակական կյանքի փոփոխություններից ելնելով՝ վերջին ժամանակաշրջանում կրտսեր դպրոցականներն իրենց ժամանակի մեծ մասն անցկացնում են մուլտֆիլմեր դիտելով: Սակայն որոշ մուլտֆիլմեր ժամանակի ընթացքում դադարել են լինել մշակութային արժեք: Եթե երկու

տասնյակ առաջ մուլտֆիլմերի մեջ որոշակի դաստիարակչական, ուսուցողական ճանաչողական նպատակ էր դրվում, ապա այսօր մուլտֆիլմերից շատերի թեմատիկան խնդրահարույց է:

Ինչպե՞ս են մուլտֆիլմի բացասական տեսարաններն ազդում երեխայի անձնային-հուզական ոլորտի զարգացման վրա:

Ագրեսիվության տեսարան. Մուլտֆիլմի գլխավոր հերոսներն ագրեսիվ են, նրանք նպատակաուղղված են վնաս պատճառել շրջապատին, հարվածում կամ սպանում են մյուս հերոսներին, ընդ որում, նման ագրեսիվ վարքային դրսևորումների մանրամասները, ագրեսիվ վերաբերմունքը բազմակի կրկնվում է, մանրամասնորեն ներկայացվում:

Ազդեցությունը և հետևանքները. Երեխաների մոտ սկսում է արտահայտվել դաժանություն, անխղճություն, անհիմն չարություն և իրական կյանքում երեխան դառնում է ագրեսիվ: Երեխայի կյանքի համար վտանգ պարունակող վարքային տեսարաններ, նման տեսարանների կրկնօրինակումը ողջամտությունից հեռու է, աննպատակ և վտանգավոր:

Ազդեցությունը և հետևանքները. երեխաների մոտ նկատվում է հակում հերոսի, որտեղ հերոսները դրսևորում են իրենց սեռին ոչ համապատասխան վարք, սեռադերային վարքի, պարտականությունների, տեսքի միախառնում: Երեխայի մոտ ձևավորվում են ոչ ադեկվատ պատկերացումներ սեռադերային համապատասխան վարքի վերաբերյալ, ինչպես նաև սեռային նույնականացման աղճակատում: Երեխան հստակ չի պատկերացնում տղամարդու և կնոջ վարքային առանձնահատկությունները, վարքային կանոնները, դերային պարտականությունները: Տեսարան, որտեղ առկա է մարդկանց, կենդանիների և բույսերի հանդեպ անհարգալից վերաբերմունք: Նման տեսարաններում անպատժելի է մնում ծաղրանքը՝ ուղղված ծերությանը, անօգնականությանը, թուլությանը, անկարողությանը: Ազդեցությունը և հետևանքները, բացասական վերաբերմունք ծանոթ մեծահասակների և հասակակիցների հանդեպ:

Անվանարկումներ՝ ուղղված մեծերին անընդունելի վարք և վերաբերմունք պարունակող ժեստեր, կոպտություն անխղճություն: Ձևավորվում է արժեքային համակարգի բացակայություն, եսասիրություն, դաժանություն:

Տգեղ և անհրապույր տիկնիկ-հերոսներով լի տեսարաններ, երեխայի համար մուլտ-տիկնիկների արտաքինն ունի առանձնահատուկ կարևորություն: Դրական կերպարները պետք է լինեն գեղեցիկ, նույնիսկ գրավիչ, իսկ բացասական կերպարները՝ ընդհակառակը:Շատ հաճախ բոլոր կերպարները՝ առանց բացառության, լավ թե վատ, շատ տգեղ և տձև մարմնակառուցվածք ունեն:

Ազդեցությունը և հետևանքները. երեխայի մոտ բացակայում է հերոսի կերպարը, վարքը և վերաբերմունքը ճիշտ գնահատելու ունակությունը: Չի կարողանում տեսողական տարանջատել լավ և վատ կերպարները: Համբուրվող արքայադստեր և արքայազնի տեսարան. իրականում նմանատիպ տեսարաններն անընդունելի են երեխայի նոր ձևավորվող հոգեկանի համար: Կերպրները համբուրվում են, մտերմանում և իրենց բոլոր վարքային դրսևորումներով սեռական հարաբերություններ ակնարկում: Մուլտարարտադրողներն ամեն տարի ավելի են մերկացնում և մարմնակառուցվածքով ավելի գրավիչ դարձնում արքայադուստրերի կերպարները:

Ազդեցությունը և հետևանքները. աղջիկ երեխաները նման կերպարների հիման վրա ձևավորում են պատկերացում սեփական մարմնի կառուցվածքի մասին և շատ են վշտանում, երբ իրենց և սիրելի մուլտ-գեղեցկուհու կառուցվածքները չեն համապատասխանում: Հետևանքները շատ մտահոգիչ են, քանի որ աղջիկներն այս ամենի հիմքում դառնում են ներամփոփ, իսկ տղաները սիրահարվում են միայն անիրական գեղեցկուհիներին: Տեղի է ունենում իրականության աղճակատում:

Գլուխ 2. Հետազոտական մաս

2.1. Հետազոտության կազմակրեպումը, մեթոդիկաների համառոտ բնութագիրը

Հետազոտության **նպատակն է՝** պարզել կրտսեր դպրոցականների հուզական ոլորտի առանձնահատկությունները, կարողությունները դրանց զարգացման առանձնահատկությունները:

Նպատակին հասնելու համար առաջադրված են հետևյալ **խնդիրները՝**

- Պարզել կրտսեր դպրոցականների հուզական առանձնահատկությունների դրսևորումները և հայտնաբերել այն աշակերտներին, որոնք ունեն հուզական ոլորտի հետ կապված խնդիրներ:
- Բացահայտել մուլտֆիլմերի ազդեցությունը կրտսեր դպրոցականների հուզական ոլորտի վրա:
- Բացահայտել հաղորդակցման առանձնահատկությունները կրտսեր դպրոցական տարիքում:

Որպես հետազոտման օբյեկտ ընտրել ենք 6-7 տարեկան կրտսեր դպրոցականներին, որի համար հետազոտությանը մասնակցել են Բերդ քաղաքի Կ. Մարդանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի 1-ին դասարանցիներ: Հետազոտությանը մասնակցել են 47 աշակերտ:

Հետազոտության նպատակի իրագործման և առաջադրված խնդիրների լուծման համար օգտագործել են հետևյալ **մեթոդը՝**

✦ *<u>Թեստային տեխնիկա</u>՝* ՛՛Մարմնի քարտեզագրում՛՛:

<u>Նպատակը</u>- սեփական հույզերի բացահայտում և կառավարում

<u>Ընթացք-</u> երեխային առաջարկում ենք գույներով լրացնել աղյուսակը՝ որտեղ գրված է տխրություն, ուրախություն, վախ, բարկություն, սեր, յուրաքանչյուր

բառին որևէ գույն տալով: Այնուհետև մարդուկին պետք է ներկել ըստ այդ գույների՝ կախված նրանից, թե որ հույզը որտեղ է գտնվում և որ հույզը ավելի շատ է գերակշռում երեխայի մոտ: Ընթացքում երեխային հարցրինք, արդյո՞ք հույզը ցավ է պատճառում մարդուկին, թե այն դուր է գալիս նրան, երբ է մարդուկն ունեցել այդ հույզը: Ու ամենակարևորը, որ մարդուկը հենց երեխան է և այն ինչ կպատմի մարդուկի մասին, իր մասին է պատմելու /նկար 1/:

Այս տեխնիկայի արդյունքում պարզ է դարձել, թե, երեխաների մոտ, որ հույզն է ավելի գերակշռում և ինչպիսի ազդեցություն ունի մուլտֆիլմերը երեխաների հուզական առանձնահատկությունների վրա: Երեխաների մոտ դրսևորված վախերը և տագնապաները՝ հարցումների և զրույցների միջոցով պարզ դարձավ, որ առաջացել են մուլտֆիլմերից: Մուլտֆիլմերի սխալ ընտրությունը ազդում է երեխայի ֆիզիոլոգիական և հոգեկան ճիշտ զարգացման վրա: Երեխաները չեն կարողանում ճիշտ տարներակել տարբերակել ճիշտ ինֆորմացիան սխալից, չեն կարողանում քննադատաբար մտածել, ապա ամբողջ ինֆորմացիան նրանց կողմից անգիտակցաբար յուրացվում է, որն էլ առաջացնում է հուզական ոլորտի հետ կապված դժվարություններ:



Նկար 1.

Եզրակացություն

Մեր կողմից իրականացված տեսական և գործնական հետազոտությունը, որի նպատակն էր պարզել կրտսեր դպրոցականների հուզական ոլորտի առանձնահատկությունները, պարզել մուլտֆիլմերի ազդեցությունը երեխաների հուզական ոլորտի վրա, բացահայտել հաղորդակցման առանձնահատկությունները կրտսեր դպրոցական տարիքում, թույլ է տալիս գալ հետևյալ եզրահանգումների.

1. Կրտսեր դպրոցական տարիքը կյանքի կարևորագույն փուլերից մեկն է, որից է կախված մտածողության և անձնավորության մակարդակը, սովորելու ցանկությունը և կարողությունը, սեփական ուժերի նկատմամբ հավատը: Սոցիալական կարգավիճակի փոփոխության արդյունքում երեխան դուրս է գալիս ընտանիքի սահմաններից՝ ընդլայնվելով հաղորդակցման շրջանակը:

Դպրոց ընդունվելով փոխվում է կրտսեր դպրոցականների հուզական ոլորտի ուղղվածությունը, կապված գործունեության փոփոխության և հուզական օբյեկտների շրջանակի ընդլայնման հետ: Այն հուզական ազդակները, որոնք ռեակցիա էին առաջացնում նախադպրոցականների մոտ, կրտսեր դպրոցականի մոտ արդեն չեն գործում: Այս տարիքային շրջանի կարևոր առանձնահտկությունը համարվում է անսահման վստահությունը մեծահասակի նկատմամբ, նրան ենթարկվելը և կրկնօրինակելը:

Հաջորդ առանձնահատկությունը երեխաների կողմից հաջողության ձգտման դիրքորոշումն է և վարքի կամային կառավարումը:Ինքնագնահատականը և խրախուսման ձգտումը մեծ դեր են խաղում կրտսեր դպրոցականի կյանքում: Հետևանար, տարքիը, որը համապատասխանում է դպրոցական ուսուցման 1-4 դասարաններին, կարելի է դիտարկել որպես երեխայի անձի բնութագրի առաջացման և ամրապնդման

կարևորագույն շրջան, որը դառնալով բավականաչափ կայուն, որոշում է նրա հուզական վիճակը գործունեության տարբեր տեսակների ընթացքում:

2. Տեսական վերլուծությունը, որը կատարվել է մեր կողմից երկրորդ գլուխում, ցույց է տալիս, մուլտֆիլմերի ազդեցությունը հաճախակի և երկարատև դիտումը բացասաբար է ազդում երեխաների հուզական ոլորտի վրա, ինչպես նաև առաջացնում է հաղորդակցման որոշակի դժվարություններ: Նշվում է, որ այն փոխարինում են այդ տարիքում անհրաժեշտ կոնկրետ- հուզական փորձի յուրացմանը, խանգարում են մոտորիկայի , խաղի և խոսքի զարգազմանը: Քանի որ երեխաները չեն կարողանում տարբերակել ճիշտ ինֆորմացիան սխալից, չեն կարողանում քննադատաբար մտածել, ապա ամբողջ ինֆորմացիան նրանց կողմից անգիտակցաբար յուրացվում է: Դրա արդյունքում կրտսեր դպրոցականները հնարավոր է ունենան շրջապատի բավականին խեղաթյուրված պատկեր:
3. Վերլուծելով հետազոտության արդյունքները՝ ծնողներին, դաստիարակներին , ուսուցիչներին, առհասարակ բոլոր այն անձանց, ովքեր առնչվում են երեխաների հետ խորհորդ է տրվում.

   ա/ առավել ուշադիր լինել մուլտֆիլմերի ընտրության հարցում,

   բ/ խստիվ արգելել մինչև 3 տարեկան երեխաներին մուլտֆիլմերի դիտումը,

   գ/ հաշվի առնել հեռուստահաղորդումների տարիքային սահմանափակումը և տևողությունը:

Գրականության ցանկ

1. Ա. Վ. Պետրովսկու խմբագրությամբ ՝Ընդհանուր հոգեբանություն՝ Լույս հրատարակչություն Երևան-1977, էջ-125
2. Аромштам М. << Дети смотрят мультфилмы>> психолого-педагогические заметки. Практика произвозсдва мультфилма в детском саду-Москва: Чистые пруды ,2006-30с:- Библиотечка<< Первого сентября>>Серия<< Дошкольное образование>>Вып.
3. Зимняя И.А..<< Педагогическая психология>>.2004 Издательская корпорация <<Логос>> Москва, стр 384
4. Изард К.Э<< Психология эмоций>> СПБ, Питер, 2006г,стр464
5. Кулагина И.Ю <<Возрастная психология: развитие ребенка от рождения до 17 лет, Ун-т Рос.акад . образования .-5-е изд.- М.: Изд-во УРОА<1999_175
6. Обхуова Л.Ф> <<Возрастная психология>> Москва <<Издательство Юрант >> 2011, 458стр
7. Шаповаленко И.В. <<Возрастная психология . Москва 2005, 350стр